

**Գեղարքունիքի մարզի Ջովաբերի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ
Ջովաբերի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2-րդ
կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

(ծածկագիր՝ 3.3-2)

2-րդ կարգի մասնագետը՝

Ա. Աշխատանքների կազմակերպման, պլանավորման, ծրագրման, համակարգման,

ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի

Բ. Կատարում է քարտուղարի հանձնարարականները.

Գ. Պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները

և տրված հանձնարարականներ չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու,

լիազորությունները վերազանցելու համար:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Ա. Առնվազն միջնակարգ կրթություն.

Բ. <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր

լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

Գ. Անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

Դ. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու

ունակություն:

Մրցույթներին կարող են դիմել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք.

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձիք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

2. Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ ատեստատի կամ դիպլոմի, վկայականների պատճենները՝ բնօրինակի հետ միասին

3. Արական սեռի անձիք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին

4. Մեկ լուսանկար 3x4 սմ չափսի

5. Անձնագրի պատճենը

6. Սոցիալական քարտի պատճենը:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հունվարի 26-ին ժամը 14:00-ին, Ջովաբերի համայնքապետարանում (գ. Ջովաբեր, 2փ, 162, 2-րդ հարկ), հեռ. 0261 6-10-95

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2020 թվականի դեկտեմբերի 23-ը:

Փաստաթղթերը ընդունվում են Հովաբերի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 093-893-007, ժամը 10:00- ից մինչև 16:00-ը բացի շաբաթ և կիրակի օրերից: